

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

Հաշվետվություն

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի 2013-2014 ուս. տարվա

/խորհրդի նիստ, 27 նոյեմբերի 2014թ./

Օրակարգ

1. Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի դեկան Ս. Աբրահամյանի՝ ֆակուլտետի 2013-2014 ուս. տարում կատարած աշխատանքների հաշվետվությունը:

Նիստին մասնակցում էին խորհրդի 72 անդամներից 58-ը: Նիստը նախագահող Ս.Գասպարյանը առաջարկեց դեկանի ելույթի համար հատկացնել 20 րոպե, իսկ մյուս ելույթների համար՝ 5-ական րոպե: Միաձայն քվեարկության արդյունքում խորհուրդը հաստատեց տվյալ ընթացակարգը:

Ս. Աբրահամյան՝ Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ
/հաշվետվությունը կցված է/

Ս. Վարդանյան՝ Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.

Սոց. հարցման իմ արդյունքները հիմնված են միայն մեկ խմբի տվյալների վրա, մնացած խմբերի տվյալները բացակայում են, և չնայած իմ բազմամյա փորձին՝ ես ստանում եմ ոչ թե առաջին, այլ միայն երկրորդ կարգի դասախոսի համար նախատեսված հավելավճար: Այս հարցադրմանն ի պատասխան դեկանն ասաց, որ ոչ թե երկու տարի հետո էր պետք այդ հարցը բարձրացնել, այլ անմիջապես տվյալների հրապարակումից անմիջապես հետո, որպեսզի հնարավոր լիներ ճշտել դրանք: ԵՊՀ ռեկտոր Ա. Միմոնյանն ավելացրեց, որ դասախոսական հավելավճարը տրվում է ըստ դասախոսի տվյալ տարում կատարած աշխատանքի, այնպես որ աշխատանքային փորձն այդտեղ կապ չունի:

Կ. Կարապետյան՝ Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոց.

Դեկանն արդեն բավականաչափ մանրամասն խոսեց ֆակուլտետի կատարած աշխատանքների մասին, ես ուզում եմ անդրադառնալ միայն մեր ամբիոնին: Թարգմանիչ պատրաստելը հեշտ գործ չէ, լավ աշխատանքից բացի պետք է ունենալ նաև լավ տեխնիկա: Հանրապետության լավագույն թարգմանիչներն ինքնուս են, մենք ուզում ենք իսկական, պրոֆեսիոնալ թարգմանիչներ պատրաստել, որի համար էլ ուզում եմ դիմել ռեկտորին՝ մեր ամբիոնին համապատասխան սարքավորումներ հատկացնելու խնդրանքով:

Մարիամ Մարտիրոսյան՝ Ֆակուլտետի ՈւԳԸ նախագահ:

ՈւԳԸ-ն հաշվետու ժամանակաշրջանում շատ ակտիվ է եղել: Ներկայացրել ենք բազմաթիվ ելույթներ գիտաժողովներում, ինչպես Երևանում, այնպես էլ հանրապետության այլ մարզերում: Կազմակերպել ենք

նան սեմինարներ, հանդիպումներ: Մեր միակ խնդիրն այս պահին աշխատանքային տարածքն է, կուզենայինք, հնարավորության դեպքում, այդ հարցը լուծում գտնել:

Ն. Գասպարյան՝ Անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս, բ.գ.թ., դոց.

Վերջերս ես հայագիտական գիտաժողովի եմ մասնակցել Սանկտ Պետերբուրգում, որտեղ պրոֆեսորադասախոսական կազմը ցանկականում էր հայագիտական գրականություն խնդրել ԵՊՀ-ից: Կուզենայի, որ ԵՊՀ-ն մեր հայագետ կոլեգաներին աջակցեր այդ հարցում:

Զ. Հարությունյան՝ Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ, մ.գ.թ.

Մեր ֆակուլտետի և դեկանի աշխատանքը բարձր եմ գնահատում: Կարող եմ նույնիսկ ասել, որ փորձում եմ ընդօրինակել մեր դեկանի անշտապ և կայուն առաջընթաց ապահովող աշխատանքը:

Ա. Առաքելյան՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ, բ.գ.թ.

Մեր ամբիոնի աշխատանքի արդյունքը դեկանի կողմից ներկայացվեց ճիշտ, որի համար շնորհակալություն եմ հայտնում դեկանին: Իրոք, մենք շատ ակտիվ ենք աշխատում: Առիթից օգտվելով նշեմ, որ հաջորդ շաբաթ անցկացնելու ենք Հայկական մեծ եղեռնին նվիրված երկօրյա գիտաժողով:

Մ. Ապրեսյան՝ Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոց.

Ուզում եմ նշել դեկանի լավ աշխատանքը: Շնորհակալություն եմ հայտնում միջազգային թեստավորման գործընթացում մշտապես մեզ աջակցելու համար: Շատ հաջող են ընթանում մեր ամբիոնի դասախոսների վերապատրաստման աշխատանքներն ու թեստերը: Ես եղել եմ Չինաստանում և պետք է նշեմ, որ անգլերենի մասնագետների մեջ առանձնացել եմ ես և երկու ամերիկացի կոլեգաներ: Մեր ամբիոնը այս տարի ակտիվ համագործակցել է չինացի գործընկերների հետ. Մտահոգիչ եմ համարում էլեկտրոնային հրատարակությունները ԲՈՀ-ի կողմից չընդունելը:

Ս. Գասպարյան՝ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., պրոֆ.

Ելույթներից ակնհայտ է, որ ֆակուլտետում գործերը լավ են ընթանում: Առաջարկում եմ հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի կատարած աշխատանքները գնահատել լավ: Առաջարկում եմ քվեարկել: Այսպիսով, միաձայն քվեարկության արդյունքում ֆակուլտետի աշխատանքները գնահատվեցին լավ: Ձայնը տանք ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանին:

Ա. Միմոնյան՝ ԵՊՀ ռեկտոր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ուզում եմ սկսել ձեզ տեղեկացնելով, որ բավականին հաջող է ընթանում ԵՊՀ հավատարմագրման գործընթացը: Գիտական առումով մենք բարձր միավորներ ենք վաստակել. տպագրվել են շուրջ երկու

հազար հոդված, բազմաթիվ մենագրություններ, գիտաժողովի թեզիսներ: Միջազգային մասնագետների նկատողությունը վերաբերում է գիտության քիչ ֆինանսավորմանը և ուսանողների ոչ այնքան ակտիվ ներգրավմանը այս գործընթացին: Որպես ՊՈԱԿ համալսարանն ունի սահմանափակումներ, ավելի ազատ գործունեություն ծավալելու համար ներկայումս համագործակցում ենք կառավարության հետ որպեսզի վերածվենք հիմնադրամի: Դա հնարավորություն կտա ավելի հեշտորեն լուծել մեր ֆինանսական խնդիրները: Ինչևէ, մյուս բուհերի հետ համեմատած մեր վիճակը վատ չի կարելի համարել: Թեև դիմորդները պակասել են, այդուհանդերձ դիմորդների մեկ երրորդը դեռևս գալիս է համալսարան: Այդ քանակը մեծացնելու համար պետք ապահովենք ավելի բարձր որակի աշխատանք: Ֆակուլտետը պասսիվ է դրամաշնորհներ ձեռք բերելու առումով: Կարգապահության հարցը շատ եմ կարևորում: Հաճախ չեն կատարվում ռեկտորատի պահանջները, մասնավորապես բոլոր ֆակուլտետներում վատ են պահպանվում արխիվները: Թարգմանչական սարքավորումների հետ կապված խնդիրը չեմ կարծում, որ այդքան լուրջ է, բոլոր ուսանողներն ունեն համակարգիչներ և ինտերնետային կապ: Համալսարանական ուսանողական աշխատանքները շատ ակտիվ են, ամենօրյա աշխատանքների վերաբերյալ ինֆորմացիան կարող էք նայել համալսարանական կայքում: Ամեն տարի մենք հրատարակում ենք ՈԻԳԸ աշխատանքների մեկից ավելի ժողովածու: Շարունակեմ ասելով, որ վերջերս մեր ուսանողները հանդիպում են ունեցել Հյուսիս-ատլանտյան ռազմական դաշինքի ներկայացուցիչների հետ: Ունենք շատ լավ ուսանողներ: Կարևորում եմ ոչ միայն ուսանողների մասնագիտական այլև՝ ընդհանուր պատրաստվածությունը: Իմ դասին մի շատ խելացի ուսանող բարձր գնահատեց իր ասելով Շուշան Պետրոսյանի մարտիկի երգը, ցավալի է, որ նա չգիտի, որ դա Աշոտ Սաթյանի երգն է: Դա մեր մեղքն է, ոչ թե ուսանողի: Եթե մեր դասախոսություններից տաս րոպե նվիրենք ուսանողի համընդհանուր զարգացման և ազգային արժեքների ներկայացման խնդիրներին, կարևոր ներդրում արած կլինենք: Ուրախացնեմ ձեզ, ասելով, որ տասներեքերորդ աշխատավարձի ավանդույթը այս տարի էլ կշարունակվի: Ձեր ֆակուլտետի աշխատանքները նկատելի են, իհարկե, բայց կուզենայի, որ ավելին անեիք, մենք էլ ձեզ միշտ պատրաստ ենք օգնելու, միայն թե դուք կարողանաք ձեր առջև դրված խնդիրները կատարել: Ցտեսություն, ամենայն բարիք բոլորիդ:

27 նոյեմբերի 2014թ.